ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՑԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ԽՄԲԱԳԻՐ, թույլ տվեք այս իմ երկտող դրութիւնը զետեղել ձեր պատուական ամսաթերթի էջերում ի գիտութիւն ընթերցող հասարակութեան։

Աչքի առաջ ունենալով մի մանկավարժական թերթի կարևորութիւնը մեր դպրոցական շրջաններում, մտադիր եմ հրատարակել «մանկավարժական գրադարան» վերնագրով մանկավարժական մի ժողովածու երկու հատորով, որի իրագործումն հաղիւ եկող տարուայ լուսնարին կարող պիտի լինեմ գլուխ բերել։ Երկու հատորի համար բաժանորդագինն է երկու ռուբլի։

«Մանկավարժական գրադարանի» բովանդակութիւնը պիտի կազմեն։

1 Դասական մանկավարժների կենսագրութիւնը և ուսմունքը ըստ ժամանակագրական կարգի։

2 Թարգմանութիւններ դասական մանկավարժների ընտիր երկերից, լինեն դրքա ուսումնական թէ կրթական։

3 Գիտնական լօղուածներ մանկավարժութեան և նորա օժանդակ գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերեալ։

4 Նկարագրութիւններ նշանաւոր դպրոցների կազմակերպութիւնների։

5 Կրթական և դպրոցական դրութիւնը քաղաքակրթուած ազգերի մէջ.

6 Ընդհանուր տեսութիւն մանկավարժութեան լուսաջադիմութեան վերայ և տեղեկութիւններ մանկավարժական աշխարհից։

7 Քննարանութիւն և գրախօսութիւն հայերէն մանկավարժական, ժողովրդական կրթական և դպրոցական երկասիրութիւնների վերայ և այլ՝ ինչ կարող է օգտակար լինել մեր դպրոցական և ժողովրդական կրթութեան։

Առաջին հատորի նիւթերը լանձնած լինելով արդէն տպագրութեան Մոսկուայում պ. Մ. Բարխուդարեանի տպարա-

նին, լոյս ունեմ, որ հայ հասարակութիւնը, նամանաւանդ դպրոցական գործի նախանձախնդիր անձինք կը ջանան թէ բաժանորդ գրելով և թէ բարոյական օժանդակութեամբ նպաստել այս ժողովածուի հրատարակութեան, ըստ որում մանկավարժութեան հմուտ անձինքներից պիտի սիրով և շնորհակալութեամբ ընդունին մանկավարժական թէ ինքնուրոյն և թէ թարգմանական ընտիր գրուածներ։

Գործակցութիւն և բաժանորդագրութիւն յանձնառնողները թող գիմեն հետեւեալ հասցէին՝ Тифлисъ, Сіонскій переулокъ № 5, домъ А. Бархударіанца.

Հրատարակիչ՝ Յովհաննէս Բարխուդարեանց.

ՎՐԻՊԱԿՆԵՐ։ «*Մուրճ*»-*ի* № 7—8, *երես* 870, *ներքևից երկրորդ տող, տպւած է՝ որ ի պէտք է լինի օդի։ Երես* 875, *ներքևից* 10-*րդ տող, տպւած է՝ մեր երեխաների, պէտք է լինի իւր երեխաների։*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։